

«Կրթությունը Ռուսաստանում. Երևան-2022» կրթական ցուցահանդես ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում



Սույն թվականի հոկտեմբերի 6-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում մեկնարկեց «Կրթությունը Ռուսաստանում. Երևան-2022» երկօրյա կրթական ցուցահանդեսը, որը կազմակերպել էին Հայաստանում «Ռոսսոտորուդնիչեստվո» դաշնային գործակալության մերկայացուցչությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը և ՀՀ ԳԱԱ-ն: Ցուցահանդեսին մերկայացված էին ռուսական բուհ-երի կրթական և գիտական ծրագրերը:

Ներկաներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սադյանը: «Ուշագրավ է, որ այս ցուցահանդեսի համար ընտրվել է հենց գիտությունների ազգային ակադեմիայի հարթակը, քանի որ հասարակության զարգացման համար անհրաժեշտ է ամրապնդել փոխգործակցությունը երկու բազային սոցիալական ինստիտուտների՝ կրթության և գիտության միջև: Իզուր չէ, որ 2022 թվականի ապրիլին մեր երկու երկրների առաջնորդները քննարկեցին միջոցառումներ՝ ուղղված կրթության,

գիտության և երիտասարդական քաղաքականության ոլորտներում փոխգործակցության զարգացմանը: Այսօրվա միջոցառումը կարևոր քայլ է՝ այդ նպատակին հասնելու համար: Մաղթում են բոլորին արդյունավետ և բեղմնավոր աշխատանք», - ասաց Աշոտ Սադյանը:

«Մեր երկրների միջև փոխգործակցության ծրագրերի լայն շրջանակը, մասնավորապես ռուսալեզուների փոխանակման ծրագիրը, համագործակցության ընդլայնումը կրթական և գիտատեխնիկական ոլորտներում, միջոցառումների համատեղ իրականացումն առաջնահերթություն են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համար: Այս ցուցահանդեսն իդեալական հարթակ է մեր սերտ համագործակցության ամրապնդման համար: Երևանում Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնի գործունեության շնորհիվ վերջին տարիներին ավելացել են կրթական և գիտական ծրագրերը, ստեղծվում են նախադրյալներ բուհ-երի և բիզնեսի համագործակցության համար, ինչը

կնպաստի մեր երկրների կրթական և գիտական ոլորտների զարգացմանը», - ասաց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Կարեն Թոշունյանը:

«Առաջին անգամ մեզ հաջողվեց մեկ հարթակում հավաքել ռուսական 13 բուհ-երի մերկայացուցիչների, ովքեր երկու օրվա ընթացքում կմերկայացնեն ռուսական կրթության և գիտության ոլորտների հնարավորությունները Հայաստանի դպրոցականներին և ռուսալեզուներին: Ավելի քան 10 տարի Ռուսաստանի Դաշնությունը «Ռոսսոտորուդնիչեստվո»-ի ծրագրով օտարերկրյա քաղաքացիներին մերկայացնում է անվճար կրթության քվոտաներ: 2021 թվականին 250 հայ ռուսալեզուներ մեկնեցին սովորելու ռուսական բուհ-եր տարբեր ուղղություններով: Ռուսալեզուների փոխանակումը կրթության և գիտության բնագավառում ավելի է մոտեցնում մեր ժողովուրդներին հատկապես մեր երկրների համար այս դժվարին ժամանակներում», - ասաց Հայաստանում «Ռոսսոտորուդնիչեստվո»-ի մերկայացուցչության ղեկավար Վադիմ Ֆեֆիլովը:

«Մենք բարձր ենք գնահատում

կրթության ոլորտում Հայաստանի և Ռուսաստանի միջև կառուցողական փոխգործակցության մակարդակը, ողջունում ենք ռուս-հայկական համագործակցության ընդլայնումը կրթության ոլորտում: Վստահ են, որ այս ցուցահանդեսը կկրի շարունակական բնույթ», - նշեց Երևանում Ռուսաստանի դեսպանության խորհրդական-դեսպանորդ Մաքսիմ Սելեզնյովը: Նա նշեց, որ այս տարի նշվում է Հայաստանի և Ռուսաստանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման 30-ամյակը և բարեկամության, համագործակցության ու փոխօգնության պայմանագրի ստորագրման 25-ամյակը: Այդ կապակցությամբ Ռուսաստանի Դաշնության կրթության նախարարության կողմից կրթության և գիտատեխնիկական համագործակցության բնագավառում պետական քաղաքականության իրականացմանը նպաստելու համար մեղավեր շնորհվեցին կրթության ոլորտի մի շարք գործիչներին:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Միջազգային գիտաժողով՝ նվիրված գիտության ականավոր կազմակերպիչ, ակադեմիկոս Էմիլ Միրզաբեկյանի ծննդյան 100-ամյակին



Սույն թվականի սեպտեմբերի 27-ից 30-ը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում անցկացվեց միջազգային գիտաժողով՝ նվիրված գիտության ականավոր կազմակերպիչ, ակադեմիկոս Էմիլ Միրզաբեկյանի ծննդյան 100-ամյակին:

«Գերբարձր հաճախյին ու տերահերցային տեխնոլոգիաներ և օպտոէլեկտրոնիկա» թեմայով:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիան, ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկա-

յի ինստիտուտը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի աջակցությամբ: Գիտաժողովին մասնակցում էին գիտ-



նականներ Հայաստանից, ԱՄՆ-ից, Իտալիայից, Ավստրիայից, Ֆրանսիայից, Հարավային Կորեայից, Գերմանիայից, Բելառուսից, Ճապոնիայից, Ավստրալիայից, մերկայացվեցին շուրջ 50 գիտական զեկույցներ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը մերկայացրեց Էմիլ Միրզաբեկյանի կյանքն ու անցած գիտական ուղին:

Էմիլ Միրզաբեկյանը ծնվել է 1922 թվականին՝ դեկտեմբերի 12-ին, Երևանում, վաստակավոր բժիշկների ընտանիքում: Նա մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, ստացել է ծանր վիրավորում: Արիության ու սխրագործությունների համար պարգևատրվել է Կարմիր աստղ և Հայրենական պատերազմի 2-րդ աստիճանի շքանշաններով: Հայրենական մեծ պատերազմի ավարտից հետո նա ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ: Իսկ 1950 թվակա-

➤2

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի ստեղծած «Նարարգին» սննդային հավելումը կանխարգելում է 2-րդ տիպի շաքարախաբ

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնում մշակվել և պաշտոնապես գրանցվել է սննդի «Նարարգին» կենսաբանորեն ակտիվ հավելումը: Այն օգտագործվում է դիսբակտերիոզի, 2-րդ տիպի շաքարախտի կանխարգելման համար, աղիքային միկրոֆլորայի հավասարակշռությունը պահպանելու և վերականգնելու նպատակով հակաբիոտիկներով բուժման ընթացքում, նպաստում է արյան մեջ խոլեստերինի մակարդակի նվազեցմանը:

«Նարարգին» կենսաբանորեն ակտիվ սննդային հավելումն ունի կիրառական նշանակություն բժշկության մեջ որոշակի հիվանդությունների կանխարգելման և բուժման համար: Նպաստում է ինսուլին արտադրող 2-բջջանի վերականգնմանը և ենթաստամոքսային գեղձի արտազատիչ ֆունկցիայի խթանմանը, ինչը 2-րդ տիպի շաքարախտի բուժման հիմնական նպատակներից մեկն է: Կարգավորում է վերականգնում է աղիքային միկրոֆլորայի հավասարակշռությունը հակաբիոտիկներով թերապիայի կիրառման, ինչպես նաև դիսբակտերիոզի դեպքում: Բերում է արյան մեջ խոլեստերինի մակարդակի նվազեցման», - ասաց «Նարարգին» սննդային հավելման մշակման հե-

ղինակ, ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի պրոբիոտիկների կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու Ֆլորա Տխրունին:

«Նարարգին»-ը մշակվել է թիրախային բազմաֆունկցիոնալ հատկություններով օժտված *Lactobacillus acidophilus* MDC 9602 (Ep. 317/402) և *Lactobacillus rhamnosus* BTK 20-12 MDC 9631 պրոբիոտիկ կաթնաթթվային բակտերիաների կոնսորցիումի հիման վրա: Այդ կաթնաթթվային բակտերիաները սինթեզում են նյութափոխանակության կենսաբանորեն ակտիվ արգասիքներ՝ արգինին ամինաթթվում, արտաբջջային բազմաշաքարներ և հակամանրէային միացություններ՝ բակտերիոցիններ, որոնք ճնշում են սննդի փչացմանը հանգեցնող միկրոօրգանիզմների՝ հակաբիոտիկների հանդեպ բազմակի կայուն մանրէների աճը:

«Կոնսորցիումի կազմի մեջ մտնող կաթնաթթվային բակտերիաների կողմից արգինինի սինթեզման եզակի հատկությունը նպաստում է ինսուլին արտադրող 2-բջջանի վերականգնմանը և ենթաստամոքսային գեղձի արտազատիչ ֆունկցիայի խթանմանը, քանի որ L- արգինի-



նը խթանում է ինսուլինի արտադրությունը և մեծացնում 2-բջջանի զգայունությունը գլյուկոզի նկատմամբ, ինչը շաքարախտի բուժման հիմնական նպատակներից մեկն է», - ասաց Ֆլորա Տխրունին: «Նարարգին»-ը ստեղծվել է «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնի կողմից բազային ֆինանսավորմամբ իրականացվող «Որոշակի հիվանդությունների կանխարգելման համար մոլ արոբիոտիկ շտամների հատկությունների ուսումնասիրություն»

ծրագրի շրջանակներում:

«Նարարգին»-ն արտադրված է համաձայն ՀՀ ՏՊ 39377614.8805-2021:

2022 թ.-ին «Նարարգին» կենսաբանորեն ակտիվ հավելումը պաշտոնապես գրանցվել է և ստացել պետական գրանցման վկայական՝ թիվ ԱՄ.01.01.01.003.R000016.01.22:

«Ներկայում տարվում են աշխատանքներ մարքեթինգի՝ «Նարարգին»-ի ներքին, ինչպես նաև արտաքին շուկայում իրացման ուղղությամբ: Ձեռք են բերվել համագործակցության նախնական պայմանավորվածություններ Ռուսաստանի Դաշնությունում, Չեխիայի Հանրապետությունում «Նարարգին»-ի ներդրման ուղղությամբ», - ասաց Ֆլորա Տխրունին:

Իրականացված հետազոտության վերաբերյալ գիտական հոդվածներ են տպագրվել բարձր հղման գործակից ունեցող գիտական հանդեսներում:

Հետազոտությունն արժանացել է դրական գնահատականի գիտական հանրության շրջանում, այդ թվում՝ միջազգային:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Միջազգային գիտաժողով՝ ...

➤1 Մին աշխատանքի է անցել Երևանի ֆիզիկայի ինստիտուտում: Իր մասնագիտացումն էմիլ Միրզաբեկյանը ստացել է ԽՍՀՄ ԳԱ Լեբեդևի անվան ֆիզիկայի ինստիտուտում՝ հայտնի գիտնական Սեմյոն Խայկինի ղեկավարմամբ: Այդ տարիներին կատարած ուսումնասիրությունների շնորհիվ էմիլ Միրզաբեկյանը ստեղծում է բեռնազված ռադիոնուկլիդների բնութագրերի չափումների ռադիոմետրիկ ընդունիչ համակարգ: Ստեղծված սարքի օգնությամբ առաջին անգամ իրականացվում է արեգակի ռադիոնուկլիդների բնութագրված բաղադրիչի չափումը: 1955 թվականին մա վերադառնում է Երևան և աշխատանքի անցնում Բյուրականի աստղադիտարանում:

1960 թվականին ՀԽՍՀ ԳԱ նախագահ Վիկտոր Համբարձումյանի և էմիլ Միրզաբեկյանի նախաձեռնությամբ հիմնվում է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը, որի տնօրենը մինչև իր կյանքի վերջը եղել է Միրզաբեկյանը: Նրա ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ ինստիտուտում մշակվել և ստեղծվել են ռադիոալեկտրոնիկայի բնութագրերի հետազոտման ռադիոաստղագիտական մեթոդներ և համապատասխան սարքավորումներ: Ստեղծված գերբարձր հաճախականության ընդունիչ համակարգերը գործնական լայն կիրառություն են գտել տարբեր բնագավառներում: Նրա օրոք Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը դարձել էր ԽՍՀՄ առաջատար կազմակերպություններից մեկը, որը, 1960 թվականից սկսած, կատարել է կարևոր աշխատանքներ՝ ապահովելով տիեզերքի ուսումնասիրության և պաշտպանության խնդիրների լուծման համար օգտագործվող հեռավոր հաղորդակցության բոլոր ալեհավաքային համալիրների ճշգրիտ աշխատանքը: Համախմբելով տաղանդավոր երիտասարդ գիտնականների՝ Միրզաբեկյանը հիմնել է գերբարձր հաճախականությունների ռադիոֆիզիկայի գիտական դպրոցը:

Էմիլ Միրզաբեկյանը մեծ ներդրում է ունեցել արեգակի ռադիոնուկլիդների բնութագրման վերաբերյալ գիտական արդյունքների ստացման գործում: Մյուս ուղղությունը կապված է գերբարձր հաճախականության էլեկտրամագնիսական ալիքների ճշգրիտ փուլաչափման ուսումնասիրման և կիրառման հետ: Նրա կողմից առաջարկված փուլերի տարբերության և նրանց փոքր փոփոխությունների մոլ մեթոդը հնարավորություն տվեց ստեղծելու բեռնաչափային ինտերֆերենցիոն սարքերի մոլ դաս՝ ռադիոլոկացիայում օգտագործելու համար:

«Ակադեմիկոս Միրզաբեկյանի կողմից դրված գիտական ուղղությունները հաջողությամբ շարունակվել են իր աշակերտների ջանքերով: Իրականացվել են մի շարք կարևոր նախագծեր տիեզերական հետազոտությունների տարբեր ծրագրերում, մասնավորապես, «Պրիորոգա», «Վեգա», «Օլեան», «Մետեոր», «Միր»: Այսօր էլ նրա հոգեզավակ ՀՀ ԳԱԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հստակ զարգացումն էմիլ Միրզաբեկյանի լավագույն հիշատակն է», - նշեց ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

1971 թվականին էմիլ Միրզաբեկյանը ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1974 թվականին՝ ակադեմիկոս: Նույն տարում նրան շնորհվել է ՀԽՍՀ Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ կոչում: 1974-1976 թվականներին մա ՀԽՍՀ ԳԱ ֆիզիկատեխնիկական գիտությունների և տեխնիկայի բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարն էր, ՀԽՍՀ ԳԱ նախագահության անդամ, 1976 թվականին՝ ՀԽՍՀ ԳԱ փոխարեզիդենտ: Երկարատև բեղմնավոր աշխատանքի համար մա պարգևատրվել է Հոկտեմբերյան հեղափոխության շքանշանով:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում.

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի բացահայտումը

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի գիտաշխատողները ցույց են տվել, որ տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում, և հաստատել են արտահայտված կապ աստղերի էվոլյուցիոն տարիքի և նրանց շրջապատող զազափոշային մյուսի հատկությունների միջև:


«Աստղաֆիզիկայում աստղառաջացման գործընթացի հետ կապված խնդիրների ուսումնասիրությունը շատ մեծ նշանակություն ունի: Մեր կողմից ներկայացված «IRAS05168+3634 աստղառաջացման տիրույթի կառուցվածքը» աշխատանքում ցույց ենք տվել, որ տարբեր ենթակառուցվածքների աստղեր տարբեր էվոլյուցիոն փուլերում են գտնվում, և կա լավ արտահայտված կապ աստղերի էվոլյուցիոն տարիքի և նրանց շրջապատող զազափոշային մյուսի հատկությունների հետ: Աշխատանքում տվյալ աստղառաջացման տիրույթի համար պարզաբանվել են որոշակի օրինաչափություններ աստղային բնակչության և նրանց մայր ամպի զազափոշային միջավայրի միջև», - ասաց ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի առաջատար գիտաշխատող, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Ելենա Նիկողոսյանը: Ըստ նրա՝ կատարված վերլուծությունը ցույց է տվել, որ ամենամեծ միջաստղային մյուսի խտություն և զանգված ունեցող ենթատիրույթ-

ներ պարունակում են I դասի էվոլյուցիոն փուլ ունեցող երիտասարդ աստղային օբյեկտների ամենամեծ տոկոսը: «Բոլոր ենթատիրույթներում աստղերի էվոլյուցիոն տարիքի լայն բաշխումը (10⁵-ից մինչև 10⁷ տարի) վկայում է, որ դիտարկվող աստղառաջացման տիրույթում աստղերի ձևավորման ընթացքն ունի ինքնաբերական և հաջորդական խտացումների բնույթ: Այն ենթատիրույթներում, որտեղ սկզբնական, մայր մոլեկուլային ամպի զանգվածն ավելի մեծ է, այս ընթացքը, հավանաբար, ավելի ակտիվ է և երկարատև», - ասաց Ելենա Նիկողոսյանը:

Հետազոտությունն իրականացվել է «Աստղառաջացման տիրույթներ՝ ձևավորում և էվոլյուցիա» առաջատար հետազոտությունների աջակցության 21AG-1C044 գիտական թեմայի շրջանակում: Գիտական արդյունքի վերաբերյալ հոդված է տպագրվել «Astrophysics and Space Science» աստղագիտության, աստղաֆիզիկայի և տիեզերական գիտությունների միջազգային ամսագրում: Աշխատանքի արդյունքները գեկուցվել են Շվեդիայի Չալմերսի տեխնոլոգիական համալսարանում 2022թ. հունիսի 20-24-ին տեղի ունեցած «From Stars to Galaxies II» միջազգային գիտաժողովի ժամանակ:

Գիտական արդյունքի չորս համահեղինակներից երեքը երիտասարդ գիտաշխատողներ են:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին





Սույն թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Արեգ Միքայելյանը:

Արեգ Միքայելյանը ներկայացրեց Բյուրականի աստղադիտարանի զարգացման ծրագիրը: Նա նշեց Բյուրականի աստղադիտարանի՝ 2022-2030 թթ., 2022-2040 թթ. ռազմավարությունների մշակման անհրաժեշտության մասին, կարևորեց միջոցառումների գիտությունների զարգացումը, ՀՀ ԳԱԱ ինստիտուտների և բուհ-երի հետ համագործակցությունը, միջազգային խոշոր ծրագրերին մասնակցությունը, երիտասարդ մասնագետների ներգրավումը:

Արեգ Միքայելյանը ծնվել է 1962 թ. Երևանում: Ավարտել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆա-

ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրենի պաշտոնում վերընտրվեց Արեգ Միքայելյանը

կուլտետը: Նրա գիտական նախասիրություններն են՝ աստղագիտական շրջափոխություններ, ակտիվ գալակտիկաներ, բազմաալիքային, օպտիկական, ենթակարմիր աստղագիտություն, սպիտակ թզուկ և պայթյունային փոփոխականներ, աստղագիտական տվյալների շտեմարաններ և վիրտուալ աստղադիտարաններ, աստղահիմնաֆորմատիկա, տիեզերական աստղագիտություն, պատմամշակութային աստղագիտություն, աստղագիտական եզրաքանություն:

Արեգ Միքայելյանի տպագրած աշխատանքներն են՝ 156 հոդված գրախոսվող ամսագրերում, որից 67-ը՝ միջազգային, 15 հոդված գրքերում, 119 հոդված գիտաժողովի նյութերի ժողովածուներում, 22 էլեկտրոնային կատալոգ, 8 գիրք/գրքույկ, 12 գրքերի խմբագրում, 10 նախատիպ, գիտաժողովների 30 թեզիս, 14 գիտահանրամատչելի հոդված, 20 տեղեկատվական հոդված:


Արեգ Միքայելյանը ղեկավարել է ՀՀ գիտության պետական կոմիտեի թեմատիկ, ANSEF, CRDF ARP1-2849-YE-06, ISTC A-1451, A-1606, CNRS, DFG, DAAD, NASA, COST, Erasmus + և այլ դրամաշնորհային ծրագրեր:

Արեգ Միքայելյանն անդամակցում է Միջազգային աստղագիտական միությանը (IAU), Եվրոպական աստղագիտական ընկերությանը (EAS), Եվրոպական ֆիզիկոսների ընկերությանը (EPS), Եվրասիական աստղագիտական ընկերությանը (EAAS), «Եվրագիտություն» ընկերությանը (Euroscience), Ամերիկյան աստղագիտական ընկերությանը (AAS), Խաղաղօվկիանոսյան աստ-

ղագիտական ընկերությանը (ASP), Եվրոպական ֆիզիկական ընկերությանը (EPS), Վիրտուալ աստղադիտարանների ալյանսին (IVOA), Մոլորակային տվյալների միջազգային ալյանսին (IPDA), Աստղագիտությունը մշակություն Եվրոպական ընկերությանը (SEAC), Ժամանակակից աստղագիտության ընկերությանը (SoMA), Եվրոպական ենթատարածաշրջանային աստղագիտական խորհրդին (SREAC), «Տեղեկատվական տեսություններ և կիրառություններ» միջազգային գիտական ընկերությանը (ITHEA), «Գիտությունը և քաղաքակրթությունը Մետաքսե ճանապարհին» միջազգային ընկերությանը (ISSCSR), Հայկական ֆիզիկական ընկերությանը (APS), Հայկական աստղագիտական ընկերությանը (ArAS):

Արեգ Միքայելյանը 2020 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակին, 6 անգամ ճանաչվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտեի «Արդյունավետ գիտաշխատող» մրցույթի հաղթող, 2019 թ. ստացել է ՌԴ տուրիզմի միջազգային ակադեմիայի մեդալ, 2017 թ.՝ «Տիգրան Մեծ» մեդալ: 2010 թ. Արեգ Միքայելյանին շնորհվել է ՄԱՄ-ՅՈՒՆԵՍԿՕ հավաստագիր: 2005 թ. արժանացել է Համաշխարհային գազաթնաժողովի էլեկտրոնային գիտության մրցանակի, Եվրասիական աստղագիտական ընկերության տարեկան մրցանակի:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին



Վերջերս հրատարակվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող, պ. գ. դ. Կլիմենտ Հարությունյանի հեղինակած «Խորհրդային Միության հերոս հայաստանցի ռուսները (1941–1945 թթ.)» վերնագրով ռուսերեն մենագրությունը: Գիրքը շարադրված է նորահայտ ու արժեքավոր փաստաթղթերի, ինչպես նաև համապատասխան գրականության ու մամուլի նյութերի հիման վրա:

Մենագրությունը բաղկացած է առաջաբանից, 8 հերոսի մասին ակնարկներից, եզրակացությունից և գրքի հեղինակի մասին բաժնից:

Առաջաբանում, բացի օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունից, հակիրճ ներկայացվել է Հայաստանի տարածքում ռուսների բնակության, Ռուսաստանում հայերի հաստատման պատմությունը: Հավաստի տվյալներ են բերվում Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին (1941–1945 թթ.) Խորհրդային Հայաստանի տարածքում ապրող ռուսների թվաքանակի և ռազմաճակատ զորակոչվածների ու մարտերում զոհվածների վերաբերյալ: Ըստ այդ տվյալների՝ պատերազմի նախօրյակին Խորհրդային Հայաստանի տարածքում ապրել են 51464 ռուս, որոնց 19,63 %-ը՝ 10107 մարդ զորակոչվել է Կարմիր բանակի շարքեր: Նրանցից 3444-ը (զորակոչվածների 34,07 %-ը) զոհվել են ռազմավարական:

Շնչոված է նաև Խորհրդային Միության հերոսի կոչման արժանացած, Հայաստանում ծնված կամ ապրած ու աշխատած ռուսների թիվը: Ըստ հեղինակի՝ Խորհրդային Միության հերոսի կոչման են արժանացել 8 ռուս, որոնցից 5-ը ծնվել են Խորհր-

դային Հայաստանում, իսկ 3-ը՝ պատերազմի նախօրյակին ծառայել են Խորհրդային Հայաստանում: Բացի այդ, հեղինակը հիշատակել է նաև 5 ռուս հերոսի անուն, որոնց ընտանիքները պատերազմի ժամանակ ապրել են Խորհրդային Հայաստանում:

Առաջաբանից հետո Կ. Հարությունյանն առանձին-առանձին լուսաբանել է ինչպես Խորհրդային Հայաստանում ծնված 5 հերոսների, այնպես էլ պատերազմի նախօրյակին հանրապետությունում ծառայած մյուս 3 հերոսների կյանքն ու գործունեությունը:

Այդ 5 հերոսներից հեղինակն առաջինը ներկայացնում է գեներալ-լեյտենանտ Բորիս Ալեքսանդրի Վաղիմիրովին, ով ծնվել է 1905 թ. ապրիլի 14-ին Ալեքսանդրապոլում (այժմ՝ Գյումրի): Նրա մայրը հայ էր, հայրը՝ ռուս: Հայրենական մեծ պատերազմի տարիներին եղել է հրաձգային բրիգադի սպա, դիվիզիայի հրամանատար, աչքի է ընկել Լենինգրադի հերոսական պաշտպանության ժամանակ, ակտիվորեն մասնակցել է Լենինգրադի գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրման, նաև գերմանական Շմալդենյուլե քաղաքի գրավման մարտերին: 1945 թ. ապրիլի 6-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո գեներալ-լեյտենանտ Բ. Վաղիմիրովը շարունակել է զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերի կազմում: Մահացել է 1978 թ. մայիսի 1-ին Մոսկվայում:

Հաջորդ ակնարկը նվիրվել է օդաչու Վալենտին Գեորգիևիչ Կոզլովին, ով մույնպես ծնվել է Ալեքսանդրապոլում 1917 թ. օգոստոսի 20-ին: Հայրենական մեծ պատերազմին նա մասնակցել է սկզբից մինչև վերջ՝ որպես ռմբակոծիչ ինքնաթիռի օդաչու, կրոսեր լեյտենանտից հասել մայրրի զինվորական աստիճանի: Վ. Կոզլովն աչքի է ընկել Մոսկվայի համար մղված ճակատամարտում, Ռժասկ-Վյազնսկյան ու Ռժասկ-Միչկյան մարտական գործողության, Լենինգրադի և Չեխոսլովակիայի ազատագրման ու Բեռլինի գրավման ժամանակ: 1945 թ. հունիսի 27-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Այնուհետև համագամորեն ներկայացվել է Խորհրդային Հայաստանի Գուգարքի շրջանի Վոսկրեսենովկա (1941 թ. մայիսի 5-

ից՝ Լեռնոնտով) գյուղում 1922 թ. սեպտեմբերի 28-ին ծնված գրոհային օդաչու Եֆիմ Գրիգորի Ուդալցովի կենսագրությունը: Հայրենական մեծ պատերազմի տարիներին նա ակտիվորեն մասնակցել է Կովկասի և Ղրիմի համար մղված ճակատամարտերին, Լենինգրադի հերոսամարտին, Մերձբալթիկայի ազատագրմանը, մարտական ուղին ավարտել է Արևելյան Պրուսիայում: Լենինգրադի և Ղրիմի համար մղված մարտերում կռվել է Խորհրդային Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի գլխավորած 47-րդ գրոհային ավիացիոն գնդում: Ավագ լեյտենանտ Ե. Ուդալցովին Խորհրդային Միության հերոսի կոչում է շնորհվել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1945 թ. մարտի 6-ի հրամանագրով:

Խորհրդային Հայաստանի Ստեփանավանի շրջանի Ալեքսանդրովկա (1939 թ. փետրվարի 22-ից՝ Մաքսիմ Գորկի) գյուղում է 1917 թ. փետրվարին ծնվել Իվան Իվանովիչ Բոնդարևը: Նա 1941 թ. հունիսի 22-ից Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է Հյուսիսարևմտյան, ապա 2-րդ Ուկրաինական և 1-ին Բելառուսական ռազմաճակատներում: Տանկի մեխանիկ-վարորդ, գվարդիայի ավագ սերժանտ Ի. Բոնդարևը հատկապես աչքի է ընկել Լենինգրադի ազատագրման մարտերում: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության՝ 1945 թ. փետրվարի 27-ի հրամանագրով արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: Դժբախտաբար հերոս տանկիստը բախտ չունեցավ տեսնելու բաղձալի հաղթանակը. զոհվել է 1945 թ. մարտի 4-ին լեհական Գրիֆիցե գյուղի համար մղված մարտում: Նրա հիշատակը վառ են պահում Հայաստանում. Տանկեի գյուղի դպրոցը կոչվում է նրա անունով, իսկ դպրոցի բակում կանգնեցվել է խիզախ տանկիստի կիսանդրին:

Հայաստանում ծնված Խորհրդային Միության 5-րդ հերոս Իվան Իվանովիչ Սեմյոնովն է: Ծնվել է 1920 թ. Կրասնոսելսկ (այժմ՝ ճամբարակ) գյուղում: Հայրենական մեծ պատերազմին մասնակցել է 1941 թ. հունիսի 22-ից՝ որպես հրետամավոր: Իր խիզախությամբ աչքի է ընկել Ուկրաինայի, ապա Արևելյան Սլովակիայի ազատագրման համար մղված մարտերում: 1945 թ. մայիսի 23-ին արժանացել է Խորհրդային Միության հերոսի կոչման: 1945 թ. հոկտեմբերի 9-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Կրասնոսելսկի դպրոցը, որտեղ սովորել էր Ի. Սեմ-

յոնովը, պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության պատվոգրով: Ըստ որոշ աղբյուրների՝ Ի. Ի. Սեմյոնովը 1948 թ. որպես կուլակի որդի զրկվել է հերոսի կոչումից: Այդ պատճառով էլ 1964 թ. ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի հրատարակած «Գիրք հերոսների մասին» աշխատության մեջ բացակայում է նրա անունը:

Այնուհետև Կ. Հարությունյանը ներկայացրել է Հայաստանում չծնված, բայց պատերազմից առաջ մեր հանրապետությունում ծառայած գեներալ-լեյտենանտներ Լեոնիդ Ալեքսանդրովիչ Կոլոբովի, Նիկոլայ Ալեքսեևիչ Վասիլևի և կարմիրբանակային Կարապ Պետրովիչ Վարֆոլոմեևի կենսագրությունները: Առաջին երկուսը պատերազմի տարիներին եղել են դիվիզիայի հրամանատարներ, երրորդը՝ սակրավոր: Եթե Լ. Կոլոբովը և Ն. Վասիլևը Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո չեն ծառայել Հայաստանում, ապա Կ. Պ. Վարֆոլոմեևը ինչպես պատերազմից առաջ, այնպես էլ հաղթանակից հետո ապրել ու աշխատել է Երևանում: Մահացել է Երևանում 1971 թ. մարտի 31-ին:

Եզրափակման մեջ համրագումարի են բերվել ուսումնասիրության արդյունքները: Բացի այդ նշվել է, որ պատերազմի տարիներին Հայաստանում են ապրել Խորհրդային Միության հերոսներ գեներալ-լեյտենանտ Իվան Ստեփանովիչ Կոլեսնիկովի, գնդապետ Նիկոլայ Վասիլևի Բոգդանովի, մայոր Իվան Նիկոլևիչ Ջապորովի, ավագ սերժանտ Ալեքսեյ Ֆյոդորովիչ Երոխինի և կրոսեր սերժանտ Ալեքսանդր Իվանովիչ Վաղիմիրովի ընտանիքները (Դիլիջան, Երևան, Վանաձոր և Արտաշատ քաղաքներում):

Եթե Խորհրդային Հայաստանում ծնված 5 հերոսների անունները հիշատակվել են հայ պատմագրության մեջ, ապա վերոհիշյալ 8 ռուս հերոսների անուններն առաջին անգամ են շրջանառության մեջ դրվում, և դա էլ հենց այս ուշագրավ աշխատության առավելությունն է:

Աշխատանքը մեծապես կշահեր, եթե գիրքն ունենար հայերեն ու անգլերեն ամփոփումներ, նաև հավելված, որտեղ տրված կլինեին Հայաստանում ապրած ու պատերազմում զոհված 3444 ռուս զինվորների անունները:

**Կոլոդյա ԳԱՍՊՐՅԱՆ
Մանկավարժական գիտությունների
թեկնածու**

ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ Սևանա լճի մասին գրքերի շնորհանդես՝ նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռաֆայել Հովհաննիսյանի 80-ամյակին

Սույն թվականի հոկտեմբերի 4-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆայել Հովհաննիսյանի «Սևանա լճի բնական պաշարների պահպանման և վերականգնման գիտական հիմքերը» վերահրատարակված և գրականագետ Ավիկ Իսահակյանի «Սևանա կղզի...» հուշապատում գրքերի շնորհանդեսը: Միջոցառումը նվիրված էր Ռաֆայել Հովհաննիսյանի 80-ամյակին:

Հյուրերին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Աշոտ Սարգսյանը: «Ռա-



ֆայել Հովհաննիսյանի հետ աշխատել ենք հանձնաժողովներում, համագործակցել ենք որպես ինստիտուտների տնօրեններ: Ավտիվ, պայծառ, հեռանկարային ծրագրեր ունեցող անձնավորություն էր: Ցավոք, ժամանակից շուտ հեռացավ կյանքից: Բայց իր գործը, այս գիրքն անմահացնում են նրան:

Այսօր նաև Ավիկ Իսահակյանի «Սևանա կղզի...» հուշապատում գրքի շնորհանդես է: Այն ներկայացնում է Ավտիվ Իսահակյանի անցկացրած օրերը Սևանի ափին, լավ օրեր, որոնք այսօր պատմութ-

➤8

Գևորգ Արտաշեսի Գևորգյանը ծնվել է 1947 թ. Լեւոնականում (այժմ՝ Գյումրի): 1965 թվականին, ավարտելով դպրոցը, ընդունվել է ԵՊՀ-ի կենսաբանական ֆակուլտետի կենսաքիմիայի բաժինը: 1967 թ. զուգահեռ սկսեց աշխատել ԳԱ կենսաքիմիայի ինստիտուտում և ստացավ կենսաքիմիկոսի որակավորում: Այն ժամանակ ինստիտուտը ղեկավարում էր աշխարհահռչակ գիտնական ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանը: Որոշելով ինստիտուտում ստեղծել լաբորատորիա, որտեղ ուսումնասիրվում էին կենսաքիմիական մեխանիզմները, օգտագործելով ռադիոնշված իզոտոպները, ակադեմիկոս Հրաչյա Բունիաթյանը պայմանավորվեց Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ռեկտոր Ռ. Խոխլովի հետ, որպեսզի իրենց մոտ Գ. Գևորգյանը շա-

ված ղեկավարացիա ընդունեց, որտեղ առաջարկվեց հրաժարվել այդ նյութի կիրառումից:

Երկրորդ կարևորագույն ուղղությունը, որն ուսումնասիրվում է պրոֆ. Գևորգյանի ղեկավարած բաժնում, փորձարարական մանիակային դեպրեսիան է: 1997 թ.-ին այդ բաժնի ասպիրանտ Ա. Գևորգյանի կողմից Միչիգանի «Նյարդագիտություն» բաժնում պրոֆ. Բերնդ Ագրանոֆֆի ղեկավարությամբ մշակվեց ծանր և լայն տարածում ստացած մանիակային դեպրեսիայի մոդելը, որը հաստատվեց ԱՄՆ-ի «Ազգային առողջապահության ինստիտուտի» (Բետեստա) կողմից, և թույլատրվեց այն կիրառել որպես այդ ախտահարումը վերադարձնող փորձարարական մոդել: Բազմակողմանի հետազոտությունների արդյունքում այսօր նրանց կողմից առաջ է քա-

լեկուլային կենսաբանների (IUBMB) ընկերությունների լիիրավ անդամ է:

Գևորգ Գևորգյանը Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի արեգիդենտն է, ընտրվել է արտասահմանյան ակադեմիկների՝ ՌԴ Բժշկատեխնիկական (Մոսկվա), Եվրոպական Գիտությունների և Արվեստների (Չալցերուրգ, Ավստրիա) ակադեմիաների ակադեմիկոս:

Պրոֆ. Գևորգյանը 11 միջազգային գիտական ընկերությունների անդամ է, 8 գիտական ամսագրերի խմբագրությունների անդամ, ԱՄՆ-ի բնական գիտությունների գրասենյակի գիտական խորհրդի անդամ և փորձագետ: 2010 թ. ճանաչվել է լավագույն գիտնական և պարգևատրվել այդ խորհրդի ոսկե մեդալով: Բազմաթիվ գիտխորհուրդների անդամ է, ղեկավարել է ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի գիտական և ինստիտուտին կից գիտական աստիճաններ շնորհող 42 մասնագիտական խորհուրդներ: Պրոֆ. Գևորգյանի ղեկավարությամբ պաշտպանվել են 25 թեկնածուական ատենախոսություններ, այսօր նա 1 դոկտորական ատենախոսության գիտական խորհրդատու է: Ավելի քան 320 տպագիր աշխատանքների հեղինակ է: ԱՄՆ-ում տպագրված կրաշ-սինդրոմի ժամանակ առաջացած սրտանկանը ճնշող գործոնի հայտնաբերմանը և ուսումնասիրմանը նվիրված գիտական հոդվածը 2011 թ. ճանաչվել է բնագավառի լավագույնը՝ պահպանելով առաջին տեղը մինչև 2013 թ. հուլիս ամիսը: Գ. Գևորգյանը մասնակցել է ավելի քան 35 միջազգային գիտաժողովների աշխատանքներին, հանդես եկել պլենար և բանավոր զեկուցումներով: Պարգևատրվել է ՀՀ ԿԳՆ ոսկե, ՌԴ ակադեմիայի բնական գիտությունների արծաթե մեդալներով, ՀՀ ԳԱԱ պատվոգրով, վաստակագրով: Միջուկային բժշկության Եվրոպական ասոցիացիայի (EANM) և Հայաստանի մասնաճյուղի նախագահն է, Միջազգային (ISN), Ամերիկյան (ASN), Եվրոպական նյարդաքիմիկոսների (ESN), Ուղեղի ուսումնասիրության (IBRO), ՌԴ բնական գիտությունների, Ֆրանսիայի «Սակլե» միջուկային կենտրոնի, ԱՄՆ-ի - Science Advisory Board, Միջազգային կենսաքիմիկոսների և մոլեկուլային կենսաբանների (IUBMB), Եվրոպական կենսաքիմիկոսների (FEBS), Եվրոպական միջուկային էներգիայի կիրառման (EAAE) գիտական ընկերությունների անդամ, մասնակցում է այդ ընկերությունների տարեկան գիտաժողովներին, վարում պլենար և սեկցիոն նիստերը:

Պրոֆ. Գևորգյանը մեծ ներդրում ունի նաև շրջակա միջավայրի ուսումնասիրության գործում: 1986 թ. Չեռնոբիլի աղետից հետո, երբ Հայաստանը ողողվել էր ռադիոակտիվ սննդամթերքով, նա միայնակ բարձրաձայնեց այդ աղետի մասին՝ հասցնելով մինչև ՀՀ Կենտրոնական Կոմիտե, քանի որ պետական սանիտարական նորմերով 100 անգամ բարձրացել էր սննդամթերքի ռադիոակտիվությունը, թեյի ակտիվությունը բարձր էր նորմայից 2000 անգամ, խտացրած կաթինը՝ 25 000, մսի պահածոներինը՝ 30 000, և այլ մթերքների աղտոտվածությունը ռադիոնուկլիդներով: ՀՀ Կենտրոնում վիճաբանությունը տևեց 2 օր, և այն բանից հետո, երբ պրոֆ. Գևորգյանը հայտարարեց, որ թույլ չի տա, որ «թուրքական յաթաղանը փոխարինեն վրացական թեյով» և այլ ռադիոակտիվություն պարունակող սննդամթերքով, հրաման տրվեց գործարաններին փոխաուցել նման սննդամթերքների արժեքները, իսկ եղածը ենթարկել չեզոքացման: Ըստ նախնական հաշվարկի, եթե այդ սննդամթերքը վաճառվեր ժողովրդին, բնակչության 40-50%-ը կարող էր ծեռք բերել անբուժելի հիվանդություններ:

Ռադիոիզոտոպային լաբորատորիայի աշխատանքի ժամանակ ինստիտուտ այցելեցին Նոբելյան մրցանակակիրներ և այլ հռչակավոր գիտնականներ, որոնք միաձայն բարձր գնահատական տվեցին լաբորատորիայի աշխատանքին և հրապարակված հոդվածներին:

ՀՀ ԳԱԱ քիմիական գիտությունների բաժանումը

Գևորգ Արտաշեսի Գևորգյանի 75-ամյակի առթիվ

րունակի իր ուսումը քիմիական ֆակուլտետի ռադիոքիմիայի բաժնում: Ավարտելով այն՝ 1977 թվականին Գ. Գևորգյանը վերադարձավ Երևան և շարունակեց արդեն սկսված լաբորատորիայի կազմակերպումը, որտեղ արդեն տեղադրված էր ֆրանսիական «Intertechnique» ֆիրմայի «SL-40» սցինցիլիացիոն սպեկտրոմետրը: 1978 թ. մեկնեց Ֆրանսիա՝ «Saclay» միջուկային կենտրոնում մոլ մեթոդների ուսումնասիրման համար, որի արդյունքում նա առաջարկեց երկու մոլարարական լուծույթ «Roche Bioelectronique Kontron» խոշոր գիտահետազոտական կենտրոնին: Առաջարկներն ընդունվեցին և կիրառվեցին «SL-4221»-ի մոդելի արտադրությունում, որը 1979 թ.-ին ձեռք բերվեց Կենսաքիմիայի ինստիտուտի կողմից: Ինչպես ինստիտուտի գիտնականները, այնպես էլ այլ ակադեմիական բազմաթիվ ինստիտուտների գիտնականներ իրենց թեկնածուական հետազոտությունները կատարեցին Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտում՝ ակադեմիական և ոչ ակադեմիական կենտրոնների երիտասարդ գիտնականների ատենախոսական թեզերի կատարման համար օգտագործելով ռադիոնշված ամինաթթուներ, ճարպեր, ածխաջրեր: 25 տարվա ընթացքում լաբորատորիայի գործունեության ժամանակահատվածում պաշտպանվեցին ավելի քան 70 թեկնածուական և 25 դոկտորական ատենախոսություններ: Նման աշխատանքներ կատարելու համար ինստիտուտ գործուղվեցին նաև Էստոնիայի և Ռուսաստանի 5 գիտնականներ: Լաբորատորիայում կատարվեցին նաև մոլ մեթոդների ուսումնասիրման լայնածավալ հետազոտություններ, նաև՝ փորձարարական կենսաքիմիայի ասպարեզում $^{14}\text{C}/^{3}\text{H}/^{32}\text{P}$ ռադիոիզոտոպների միաժամանակյա զրանցումը և հաշվարկումը, որը մինչ այդ չէր կիրառվել աշխարհի ոչ մի լաբորատորիայում:

Պրոֆեսոր Գևորգյանն իր երկրորդ ռադիոքիմիկոսի մասնագիտության շնորհիվ ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից առաջադրվեց Եվրոպական միջուկային էներգիայի կիրառման կարգավորման գրասենյակի ՀՀ լիազորված մասնագետի պաշտոնում: 2010 թ. Պալերմոյում (Իտալիա) կայացած վերը նշված գրասենյակի զազաթանժողովում, որտեղ նա ղեկավարում էր բժշկական ուսումնասիրությունների սեկցիան, քննարկվեց 10-ից ավելի եվրոպական երկրներում կիրառվող արծաթի նանոմասնիկներով չաքարախտից առաջացած ռետինոպատիայի բուժումը: Գիտական ծանրակշիռ փաստարկների օգնությամբ պրոֆ. Գևորգյանը և մի խումբ այլ գիտնականներ գիտաժողովի ժամանակ փաստարկեցին այդ մեթոդի անթույլատրելիությունը, քանի որ արծաթի նանոմասնիկները, կուտակվելով գլխուղեղում, առաջացնում են այդ օրգանի անդարձելի քայքայումը: Գազաթանժողովը հաշվի առավ այդ փաստը, և եվրոպական երկրների առողջապահական ծառայություններին ուղղ-



վել մանիակային դեպրեսիայի բուժումը կաթնաթթվային պրոբիոտիկներով: 2013 թ. ղեկտեմբերին հրատարակվեց մեծածավալ հոդված, որն արդեն ստացել է լայն դրական արձագանք (Lactic acid bacteria and modified natural mineral composite substances against of chronic stress-induced depression and cognitive deficits. The Journal of Applied Biochemistry, 2013, 11, 57-69):

Պրոֆ. Գևորգյանի ղեկավարությամբ գործող ախտաբանական կենսաքիմիայի բաժինն արժանացել է 5 միջազգային դրամաշնորհների ԱՄՆ-ի էներգետիկայի նախարարության (APP) կողմից, և 5 դրամաշնորհի՝ ՀՀ Գիտության կոմիտեի կողմից՝ խոզերի մոտ մոդելավորված սրտանկանի ինֆարկտի բուժման հետազոտման համար: Այդ դրամաշնորհին օժանդակել և իրենց մասնակցությունն են ունեցել Նոբել-Մարաշ կլինիկայի սրտաբան-վիրաբույժները:

Պրոֆ. Գևորգյանի անմիջական ջանքերով Հայաստանի կենսաքիմիկոսների ընկերությունը վերակազմավորվեց Կենսաքիմիկոսների հայկական ասոցիացիայի, որը 2010 թ.-ից Միջազգային կենսաքիմիկոսների և մո-

ՎԱՀԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ «ՉԱՐԵՆԳ» ԳԻՐ-ԲԸ ՀԱՆՃԱՐԵՎ ԳՐՈՂԻ ՄՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԲԱՆԱԿԻՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է ՆԱԽԻՆՈՒՄ Է Ե. ՉԱՐԵՆԳԻ ԾԱՆՈՅԱՆ 125-ԱՄյԱ ՀՈՐԵՍՅԱՆԻՆ

(Սկիզբը մախորդ համարում)

Չարենցի դեմ հալածանքը դուրս է գալիս հայկական շրջանակներից և քննարկվում է նաև անդրկովկասյան մասշտաբով: Գրական և կուսակցական գործիչ Վախիմիր Սուտիրինի «Անդրկովկասի գրականության ակնարկներ» գրքում (1928թ.), ասվում է, թե Չարենցի «Տաղարանում» օգտագործված Սայաթ-Նովայի «ոճը» չի կապվում պրոլետարական բանաստեղծի կոչման հետ:

Մանրամասն վերլուծելով «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության ամեն բառն ու տողը՝ Ջրբաշյանը հիացմունքով վերահաստատում է Մարտիրոս Սարյանի հիասքանչ բնութագրականը: «Դա մեր ազգի կենսագրության ու վարքի կենդանի արտացոլանքն է, մեր կրած տառապանքի ու փայփայած իդեալների, մեր անկումների և վերելքների, արիավորների ենթակա մեր ճակատագրի ու անմեռ մնալու մեր ձգտման գեղարվեստական սինթեզն ու բյուրեղացումն է:

Այդպիսի մի երկ աշխարհ բերելու համար պետք է ամենաքիչը կիսաստված լինել»: Համաշխարհային գրականության հմուտ գիտակ Արշակ Չոպանյանն էլ 1924-ին գրում է, թե Չարենցը հայ հանճարի նոր հաստատումն է ու միաժամանակ բարեգուշակ նշան հայ ցեղի հոգեկան գործանա:

Գրիգոր Նարեկացուն ու Նահապետ Քուչակին անվերապահ համարներ հայտարարելով ու իրեն հարվածի տակ դնելով՝ Չարենցը իրեն պաշտպանելու ելքը գտնում է՝ նույն միջնադարյան դպիրներին՝ Նարեկացուն, Շնորհալուն, կոչելով «մռայլախոս դպիրներ սև», «պատան մտքի ու անարև»: Նավասարդյանի կարծիքով բանաստեղծն այս կերպ փորձել է փրկել իր «վարկը»:

Չմոռանալով մի կարևոր փաստ: 1934-ի օգոստոսին Մոսկվայում տեղի է ունենում ԽՍՀՄ գրողների առաջին համագումարը, որում Չարենցը հանդես է գալիս դարակազմիկ ելույթով ու տարբեր

հանրապետություններից Մոսկվա ժամանած, նաև արտասահմանից եկած հյուրերի առաջ հայտարարում է, թե իր պոեզիայի ուսուցիչները հայ միջնադարյան տաղերգուներն են: Մեծ բանաստեղծն առաջադրում է մի խնդիր, որն այսօր հիանալի ընդդիմախոսում է գլոբալիզացիայի հեղինակներին: «Որքան էլ փոքր լինի ժողովուրդը և նրա գրականությունը, վերջինս չի կարող չունենալ իր ինքնատիպ, եզակի ու անկրկնելի նրբերանգը, որպիսին հատուկ է միմյայն տվյալ գրականությանը և նրա լավագույն ներկայացուցիչներին: Այս կարելի է ընդունել ապրիորի, հակառակ դեպքում այդ հարցում մենք հարկադրված կլինենք կանգնել ռասայական տեսակետի վրա»:

Արդեն 1934-ի հուլիսին, ինչպես վկայակոչում է Նավասարդյանը, Չարենցի գլխին կուտակվում են սև ամպեր: Նրա մասին գրում էին. «Մեր գրականության մեջ նացիոնալիստական տենդենցների արտահայտիչն էր Չարենցի խմբակը նաև իր մի շարք գրական-քաղաքական հայացքներով»:

Սա առավել քան վտանգավոր վճիռ էր, որովհետև 1918-ից Չարենցը Սովետական Միության կոմունիստական կուսակցության անդամ էր: Չարենցին ու նրա գաղափարակիցներին մեղադրում էին դաշնակիզմի մեջ:

Նավասարդյանի գրքում մեջբերված է նաև 1936-ի հունվարին Մոսկվայում հայ գրողների պատվիրակության ու Ստալինի հանդիպման ժամանակ վերջինիս հարցումը Ստեփան Ջոդյանին, թե ինչպես է ապրում գրող Եղիշե Չարենցը: Այդ գրույցն ամմիջապես տպագրվում է խորհրդային Միության 4 պաշտոնաթերթերում՝ «Պրավդա», «Իզվեստիա», «խորհրդային Հայաստան», «Չարիա Վոստոկա»:

Նավասարդյանը, որը փաստում է, թե Չարենցն ինչքան է գրել դաշնակցականների դեմ, նշում է, թե գրողն իր ծանր ու մղձավանջային օրերին պատգամում է

նույն պատվիրանը, ինչը որ ունեին դաշնակցականները. «Հայ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է»:

Գրքի բազմաթիվ էջերում մեջբերումներ կան Չարենցի տարբեր գործերից՝ համապատասխան մեկնաբանություններով: Նրանում պատկառելի քանակի էջերում նկարագրված է բոլշևիզմի և Չարենցի անհաշտ պայքարը, որն ավելի է սրվում, երբ Չարենցը տեսնում է, թե ինչպես Հայաստանի պատմական տարածքներում Արցախ, Նախիջևան, թուրքերն իրենց կատարյալ տերեր են զգում: Բավականին էջեր գրքում նվիրված են Ստալին-Չարենց, բոլշևիզմ-Կարսի պայմանագիր իրողություններին, որոնք պետք է հատկապես հետաքրքիր լինեն հայ ժողովրդի պատմությանը զբաղվող գիտնականներին, որովհետև բերվում են որոշակի փաստեր:

Նավասարդյանը հիացած է այն փաստով, որ Չարենցը չի քծնել Ստալինին: Նա նույնիսկ կասկածում է, թե 1946-ին 1160 մեծադիր էջերից բաղկացած «Ընտիր էջեր հայ գրականության (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը)» լույս տեսած հատորում «Թուղթ Իոսիֆ Ստալինին» անավարտ պոեմի հատվածը գրել է Չարենցը: Անավարտ պոեմի ընծայակալն վերջում կա տարեթիվ՝ Anno Domini MGMXXXVI, այսինքն՝ 1936: Դրանից առաջ գրված է. «Պոետական խոսքի տարօրինակ վարպետների Ամենամեծ հովանավորին և սիրողին՝ Եղիշե Չարենցից, նվաստագույն պոետից ժողովրդի մաիրական»:

Այսպես Գրիգոր Նարեկացին կրիմեր Աստծուն: Այս ուղերձը, որը գրված է Չարենցի ոճով, հարուցում է Նավասարդյանի տարակուսանքը և նա գրում է. «Ինչո՞ւ պոեմը «Անավարտ» է մնացել, ո՞ր է բացատրությունը այս խորհրդավոր գաղտնիքի: Եթե Չարենցը այսքան մեծ համարում ուներ «Իոսիֆ Ստալինին» մասին, ինչո՞ւ այս համարումի հետքը չկա իր բովանդակ գրական ստեղծագործության

մեջ, ինչո՞ւ մինչև «Թուղթը» Ստալինի համարը նա երբեք չտարփողեց իր քնարի վրա, ինչո՞ւ լուռ մնաց մինչև իր մահը»: Նավասարդյանը չի գտնում այդ ինչուների պատասխանը: Ուշագրավ է, որ 1946 թվականին լույս տեսած «Ընտիր էջեր հայ գրականության» հատորում Չարենցից դրված էր նաև «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը:

Նավասարդյանը վկայակոչում է Չարենց բանաստեղծին հայտնագործած ու նրա եղբորական մահով խորապես վշտացած Նիկոլ Աղբալյանի՝ բանաստեղծի հիշատակին ուղղված խոսքերը. «Նա մրկահավմ եղավ աշխարհասասան հեղափոխության, որ թռած էր Հայաստան երկրից՝ մասնակցելու «խելագարված ամբոխների» գրոհին: Երբ ալիքն իջավ, մրիկներին վարժված իր թևերն անփոթորիկ մնացին: Սողացողներն արծվին չհասան: Իր ճախրը հիմա խանգարում էր շատերին: Եվ Կրոնոսը կլանեց ծագերին... Շատերի հետ, որ դեռ փոթորիկ ունեին իրենց հոգիների մեջ, Չարենցը ևս լռեց առհավետ»:

Վահան Նավասարդյանի գիրքն առաջին անգամ լույս է տեսել Կահիրեում և կոչվում է «Չարենց (Հուշեր և խորհրդածություններ)»: Այն որոշակի ավանդ է չարենցագիտության մեջ, բացի այդ ունի ճանաչողական մեծ արժեք: Գրքի հեղինակը քաջածանոթ է Չարենցի ողջ ստեղծագործությանը, նրան համարում է հանճար, որի գրական խոսքը ժամանակի պատմական ու քաղաքական հեղաբեկումների ընթացքում ենթարկվում է փոփոխությունների՝ ի վերջո համազելված ամեն իսկական հանճարի համար ի վերուստ նախասահմանված ելակետին: Չարենցն իր գործերով մշտապես մնացել է ազգային ու համամարդկային. սա է Նավասարդյանի եզրահանգումը:

Անելտա ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ
ՀՀ ԳԱՍ Թղթակից անդամ

«Հայագիտությունը ոչ միայն ակադեմիական գիտական, այլ նաև քաղաքական կարևոր նշանակություն ունի». լեզվաբան Հրաչ Մարտիրոսյան



Սույն թվականի սեպտեմբերի 26-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում երիտասարդ գիտնականների համար «Հնամյա ու նորաշունչ հայոց լեզուն» և «Հայոց հնագույն դիցուհու պաշտամունքի մնացուկները Արցախում ու Սյունիքում» թեմաներով զեկուցմանը հանդես եկավ լեզվաբան-համեմատաբան Հրաչ Մարտիրոսյանը:

Նա ներկայացրեց հայոց լեզվի պատմությունը՝ հնդեվրոպական ակունքներից մինչև գրաբար, աշխարհաբար ու բարբառներ, ընդգծեց Արցախի ու Սյունիքի տարածքների բար-



բառային ու լեզվամշակութային առանձնահատկությունները:

Հրաչ Մարտիրոսյանը կարևորեց հայագիտության հանրայնացումը: «Հայագիտությունը ոչ միայն ակադեմիական գիտական, այլ նաև քաղաքական կարևոր նշանակություն ունի: Մենք ունենք աշխարհում հայագիտության հանրայնացման խնդիր: Այդ անհրաժեշտությունը նաև պայմանավորված է քաղաքական արդի վիճակով: Մեր թշնամին համակարգված աշխատում է գիտությունը կեղծելու ուղղությամբ: Մենք պետք է ոչ միայն գիտա-

կան, այլ նաև դիվանագիտական հանրայնացման օղակներով ակադեմիական ճշմարտությունը տեղ հասցենք»,- ասաց Հրաչ Մարտիրոսյանը:

Ըստ նրա՝ ամբողջ հնդեվրոպական ակադեմիական դաշտը չի կարող ուսումնասիրվել և զարգանալ առանց հայերենի: «Ես հաճախ դասախոսելու հրավերներ եմ ստանում եվրոպական տարբեր երկրներից և կարող եմ վստահ ասել՝ գիտական աշխարհը հետաքրքրված է հայագիտությամբ»,- նշեց նա:

Երիտասարդ գիտնականներին Հրաչ Մարտիրոսյանը խոր-



հուրդ տվեց. «Հարկավոր է ունենալ լայն մտահորիզոն և տեսնել, որ հետազոտական նյութը օվկիանոս է, բազմաշերտ և չունի սահմաններ»:

Հրաչ Մարտիրոսյանի գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայոց լեզվի պատմությունն իր ողջ ընթացքով՝ հնդեվրոպական ակունքներից մինչև բարբառներ ու արդի լեզու: 2008 թվականին Նիդեռլանդների Լեյդենի համալսարանում նա պաշտպանել է «Հայերենի բնիկ բառաթերթի ստուգաբանական բառարան» թեմայով ատենախոսությունը,

այնուհետև դասավանդել է նույն համալսարանում: Հրաչ Մարտիրոսյանը դասախոսել է նաև Լոս Անջելեսի, Կալիֆոռնիայի, Միչիգանի, Օբսիդորդի, Քեմբրիջի, Սորբոնի, Պալմայի, Մոսկվայի համալսարաններում, գիտահետազոտական աշխատանքներ է կատարել Վիեննայի, Բեռլինի, Լեյդենի համալսարաններում: Հայաստանում նա հաճախ անցկացնում է դասընթացներ և գիտարշավներ:

ՀՀ ԳԱՍ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

Կերակրի աղը, միջավայրը և մարդը

Միջավայրի, մարդու, կենդանիների, հողի և բույսերի վրա կերակրի աղի (NaCl) դրական և բացասական ազդեցությունների մասին շատ է գրվել, սակայն մեր ժողովուրդը շարունակում է այն օգտագործել և կիրառել իր սովորույթի ուժով՝ անտարբեր մնալով գիտականորեն ապացուցված փաստերի նկատմամբ։ Դեռևս անցյալ՝ 20-րդ դարում, հիմնվելով բավարար ուսումնասիրությունների վրա, գիտնականներն այն անվանել են «սպիտակ մահ»։ Չպետք է մոռանալ նաև Կերածննդի դարաշրջանի շվեդարացի հայտնի բժիշկ և բնագետ Պարացելսի (1493-1541 թթ.) այն միտքը, որ «բոլորը թույն են, և բոլորը դեղ են, միայն չափաքանակն է տարանջատում թույնը դեղից», իսկ ժողովրդական փորձն ասում է «ամեն ինչ չափի մեջ է լավ»։ Բայց այդ չափը տարբեր օրգանիզմների համար կարող է տատանվել, և անհատը պետք է կարողություն ունենա զգալու այդ չափը։ Դրա համար անհրաժեշտ է նաև, որ մարդը տեղեկացված լինի կերակրի աղի օգտակարության և վնասի մասին։ Վարչարարական միջամտությունը կարող է լինել անարդյունավետ, եթե մարդ չի պատկերացնում իր գլխին կախված վտանգի էությունը։

Հասուն մարդը օրվա ընթացքում օգտագործում է 700-900 գ սնունդ և 1,5-2,0 լ ջուր, որոնց կազմում նաև՝ զգալի քանակությամբ կերակրի աղ։ Մարդու սնունդը պետք է պարունակի ավելի քան 600 նյութեր, այդ թվում՝ նաև աղ, որոնք անհրաժեշտ են օրգանիզմի նորմալ կենսագործունեության համար, և հենց այդ նյութերի միջոցով է ապահովվում մարդու կողմից ծախսվող ողջ էներգիան։ Սպիտակուցներով, ճարպերով և ածխաջրերով օրգանիզմի օպտիմալ պահանջը բավարարելու համար սննդաբաժնում դրանց հարաբերակցությունը պետք է լինի 1:1,2:4, ընդ որում սպիտակուցները սննդի էներգետիկ մասնաբաժնում պետք է կազմեն 12%, ճարպերը՝ 30-35%, ածխաջրերը՝ 50-60%, իսկ հանքային նյութերը, որոնց թվում նաև կերակրի աղը՝ 0,5-0,7%։ Հասուն մարդու (70 կգ քաշ ունեցող) օրգանիզմում պարունակվում է մոտ 254 գ կերակրի աղ, 1000-1200 գ կալցիում (որի 99%-ը կուտակված է ոսկրերում)։ Մեկ օրվա ընթացքում ոսկրերից դուրս է բերվում 700 մգ կալցիում և այդքան էլ մտնում է այդ հյուսվածքի մեջ։ Օրական մարդու օրգանիզմ է մտնում 200-500 մգ մագնեզիում, որի ավելի քիչ քանակության դեպքում առաջանում են սիրտ-անոթային ախտաբանական երևույթներ։ Մարդու օրգանիզմը պարունակում է 600-900 գ ֆոսֆոր, որի 90%-ը ոսկրերում։ Ֆոսֆորով և կալցիումով հարուստ են կաթը և կաթնամթերքը, միսը, կանաչեղենը, ձուկը և այլն։ Բուսական սննդում և անասնապահական կերում հանքային նյութերի արտահայտված անբավարարության հետևանքով զարգանում են մարդու և կենդանիների էնդոմիկ հիվանդություններ, այդ թվում՝ թոքախտ, հոդատապ և հոդերի այլ հիվանդություններ։ Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ մարդն իր օգտագործելիք կերակրի աղից բաժին է հանում նաև ընտանի կենդանիներին, իսկ վայրի կենդանիներն անհրաժեշտաբար փնտրում և գտնում են աղային շերտեր, որոնցից և օգտվում են։ Առանց աղի օգտագործման չի կարող լինել առողջ օրգանիզմ։ Այս համապիտանի նյութի համար անցյալում գծովել են հարևանները, իսկ պետությունների միջև նույնիսկ ընթացել է «աղային» պատերազմ։

Օրգանիզմում հանքային նյութերը կարևոր դեր են խաղում փոխանակային գործընթացներում, դրանք կատարում են հարմարվողական ֆունկցիա, մասնակցում են ոսկրային հյուսվածքի կառուցմանը, ջրաաղային և թթվափոխանային բաղադրիչների հավասարակշռմանը, մտնում են ֆերմենտների կազմի մեջ։ Պետք է խմանալ նաև, որ կերակրի աղի միջոցով է օրգանիզմը հիմնականում ստանում մատրիումի իոնները, որոնք, լինելով թույլ թունավոր և մասնակցելով բջիջների իոնափոխանակային ռեակցիաներին, ապահովում են դրանց կայունությունը ու դիմադրողականությունը օրգանիզմի վրա մշտապես ներգործող միջավայրի փոփոխվող գործոնների նկատմամբ։ Նատրիումի իոնները կարևոր դեր են խաղում մկանային բջիջների նորմալ գործողականության ապահովման և նյարդային իմպուլսների փոխանցման

գործում։ Դրանք ազդում են ֆերմենտների աշխատանքի և կենսաթաղանթներով նյութերի տեղաշարժի վրա, կանոնավորում են ջրային փոխանակումը և հեշտացնում ջրամիացումը սպիտակուցներին և օրգանական թթուների լուծումը։ Նատրիումի միացություններն օգտագործվում են նաև բժշկական նպատակներով։ Օրինակ, կերակրի աղի 0,9%-անոց ֆիզիոլոգիական լուծույթը կիրառվում է ներերակային ներարկումների ժամանակ, արժաթի միտրատով թունավորման դեպքում խմում են NaCl-ի 2-5%-անոց լուծույթ։ Սննդային սոդան (NaHCO_3) օգտագործվում է ստամոքսի թթվությունը չեզոքացնելու համար, մատրիումի սուլֆատի (Na_2SO_4 գ $10\text{H}_2\text{O}$) լուծույթը՝ որպես լուծողական, իսկ մատրիումի քառաբորատը ($\text{Na}_2\text{B}_4\text{O}_7$ գ $10\text{H}_2\text{O}$)՝ բուրան, ունի հակասեպտիկ հատկություն և կիրառվում է արտաքին թրջոցների համար։ Այս շարքը կարելի է շարունակել։

Միևնույն ժամանակ պետք է խմանալ նաև կերակրի աղի չարաշահման վտանգների մասին։ Աղի ավելցուկը



նպաստում է հիպերտոնիայի զարգացմանը, երիկամներում և միզատար ուղիներում քարերի առաջացմանը, գլխուղեղի գործունեության և իոնափոխանակային գործընթացների խանգարմանը։ Աղի մվազագույն մահացու չափաբաժինը բերանով ներմուծելու դեպքում մարդու մեկ կգ զանգվածի հաշվով կազմում է 8,2 գ։ Մարդու միջին պահանջարկը կերակրի աղի նկատմամբ օրական կազմում է 1,5-20 գրամ։

Քաղցրահամ ջրերում լուծված աղերի ընդհանուր քանակը կարող է հասնել մինչև 1 գ/լ-ի, որի մեջ կատիոնները բաշխվում են հետևյալ միջին տոկոսային հարաբերակցությամբ. Ca^{2+} 64%, Mg^{2+} 17%, Na^+ 16%, K^+ 3%։ Այդ ջրերում աղերի 80%-ը կազմում են կարբոնատները, 13%-ը՝ սուլֆատները, և 7%-ը՝ քլորիդները։ Իսկ օվկիանոսի և ծովերի ջրերում կարբոնատները կազմում են 0,4-1,6%, սուլֆատները՝ 10-30%, քլորիդները՝ 70-89%։ Օվկիանոսի և ծովերի ջրերի կազմում եղած աղային միացություններից առաջին տեղը գրավում է կերակրի աղը, որից հետո գալիս են բարիումի քլորիդը, մագնեզիումի սուլֆատը և կալիումի քլորիդը։ Երկրակեղևում մատրիումի և կալիումի պարունակությունը գրեթե նույնն է, համապատասխանաբար՝ 2,64 և 2,66%։ Շնորհիվ իր

բազմաբաղադրիչային կազմի ծովաջուրը բարերար ազդեցություն ունի մարդու օրգանիզմի վրա։ Այն ունի մանրէասպան հատկություն, և այդ է պատճառը, որ չնայած ծովի ափամերձ ջրում լողացող մեծ թվով մարդկանց, այդ ջուրը հիվանդությունների աղբյուր չի դառնում։ Մի քանի վայրկյանում ծովաջուրն կենսաբանորեն ոչնչանում է մարդու սպերման։ Հաշվի առնելով կերակրի աղի մանրէասպան և ախտահանիչ հատկությունները՝ դրա հանքերում պատրաստվել են սենյակներ՝ շնչառական ուղիների հիվանդությունների բուժման համար։

Կերակրի աղը մեծ վնաս կարող է հասցնել նաև միջավայրին, հողին, բույսերին, եթե այն օգտագործվում է ձմռանը քաղաքների փողոցներում ձյան ու սառցակալման դեմ։ Չգիտես ինչու, անվտանգ երթևեկությունն ապահովող մարմինները (քաղաքապետարանը և ճանապարհները շահագործող հիմնարկները) իրենց առաքելությունն իրականացնելու միակ միջոցը համարում են տեխնիկական աղի կիրառությունը, որի հասցրած տնտեսական և բնապահպանական վնասը երբեք հաշվի չեն առնում։ Տեխնիկական աղը նույն մեխանիկորեն մանրացված մատրիումի քլորիդն է՝ որոշ ուղեկցող ապարների խառնուրդով։

Աղի նկատմամբ բույսերն ավելի զգայուն են, քան մարդը։ Այդ նյութի պարունակության բարձրացումը հողում կամ ջրում քայքայում է բույսերի արմատները։

Իսկ ո՞րն է աղի «մեղքը»։ Նատրիումի քլորիդն օժտված է ազդեցիկ և քայքայիչ հատկություններով։ Լուծվելով ճնիղի ջրերի մեջ՝ աղային լուծույթը քայքայում է ասֆալտը, մայթերի բետոնե սալիկները և քարերը, ավտոմեքենաների անվադողերը և մետաղական մասերը, մարդկանց կոշիկները, մալուխները, շենքերի հիմքերը։ Իսկ դրա հասցրած ամենամեծ վնասը կրում են հողը և բույսերը։ Անվանի հողագետ Վ. Կովչան ջրում հեշտ լուծվող, հողի և բույսերի համար վտանգավոր աղերը, ըստ դրանց վնասակարության աստիճանի, բաշխում է հետևյալ շարքով՝ սոդա՝ մատրիումի կարբոնատ (Na_2CO_3) > մատրիումի հիդրոկարբոնատ (NaHCO_3) > մատրիումի քլորիդ (NaCl) > կալցիումի քլորիդ (CaCl_2) > մատրիումի սուլֆատ (Na_2SO_4) > մագնեզիումի քլորիդ (MgCl_2) > մագնեզիումի սուլֆատ (MgSO_4)։ Սոդայի միայն 0,005% քանակությունը գետնաջրերում կամ բույսի արմատաբանակ շերտի հողում սպանում է բույսերին, իսկ քլորի մահացու չափը կազմում է 0,007-0,01% (տարբեր բույսերի համար)։ Ինչպես տեսնում ենք, մատրիումի քլորիդն իր վնասակարությամբ գրավում է 3-րդ տեղը, և մայրաքաղաքի մայթերին կից սիզամարգերում տնկված ծառերի չորացման պատճառներից մեկը ձմռանային աղացանությունն է։ Այն խստորեն արգելված է միջազգային կազմակերպությունների կողմից՝ նկատի ունենալով աղի լուրջ վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի վրա։

Շատ երկրներում ձյունը մայթերից խնամքով մաքրվում և լցվում է կանաչապատ տարածքները, իսկ փողոցներից մաքրվում և մեքենաներով տարվում է դաշտերը կամ լցվում գետը։ Ձյունը մեր սակավահող և սակավաբույս երկրում առավել մեծ նշանակություն ունի, այն ուղղակի բնության բարիք է և այդ բարիքի դեմ ոչ թե աղով պետք է պայքարել, այլ խնամքով օգտագործել։

Պետք է նկատի ունենալ, որ մենք հպանցիկ անդրադարձանք կերակրի աղի դրական և բացասական հատկություններին՝ չխորանալով դրա ազդման մեխանիզմների քննարկման մեջ։

Այսպիսով, եթե մտածում ենք ազգաբնակչության առողջության մասին, ապա պետք է ժողովրդին տեղյակ պահել կերակրի աղի օգտակար և վնասակար հատկությունների և օգտագործման չափաքանակների մասին, իսկ վարչաիրավաբանական ճանապարհով հասարակական սննդի օջախներում աղի արգելումը, չնայած նպատակը բարի է, կարող է հանգեցնել հակառակ արդյունքի։

Ռոմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
բիւմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՎԿԻՏԵՆԻԱՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
գյուղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Քարշի Չերչիլի հայտնի լուսանկարը գողացել են

Օտտավայի բարձրակարգ հյուրանոցներից մեկում 8 ամիս անց են նկատվել, որ իրենց՝ 100.000 դոլար արժողությամբ սեփականությունը՝ աշխարհահռչակ հայ լուսանկարիչ Յուսուֆ Քարշի Չերչիլի հայտնի լուսանկարը բնօրինակը չէ, իրազեկում է գերմանական «Ֆոկուս» փոխանցելով հյուրանոցի տնօրենի օգոստոսի 24-ին լրատվամիջոցներին հաղորդածը՝ «լուսանկարն անգնահատելի

լի արժեք է՝ Քարշի, մեր հյուրանոցի, Կանադայի և Մեծ Բրիտանիայի պատերազմական պատմության անբաժանելի մաս։ Երկի ինչ-որ մեկն ուզեցել է սեփական հավաքածուն համալրել կամ էլ՝ վաճառել։ Աշխատակիցներից մեկը նկատել է, որ հյուրանոցի պատից կախված Չերչիլի լուսանկարի եզրերը տարբեր են Քարշի լուսանկարների բնօրինակներից։ Օգոստոսի 19-ին հյուրանոց է ժամանել ոս-

տիկանությունը, որը դեռ ուսումնասիրում է տեսաժապավենները։ Ճշտել են, որ գողությունը կատարվել է 2021-ի դեկտեմբերի 25-ից 2020-ի հունվարի 6-ը։ Կորոնավիրուսի պայմանավորված՝ հյուրանոցի բոլոր այցելուների պարտադիր դիմակով լինելը դանդաղեցնում է արագ բացահայտումը։

Անահիտ ՀՈՎՍԵԹՅԱՆ,
Գերմանիա





ՏԻԳՐԱՆ ԶՈՒԽԱՃՅԱՆԻ «ԱՐԻՖԻ ԽՈՐԱՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ».

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԱՏԱԿԵՐԳԱԿԱՆ ՕՊԵՐԱՆ 150 ՏԱՐԵԿԱՆ Է

Հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ առանձնահատուկ տեղ ունի 1872-ի դեկտեմբերի 9-ը. Կ.-Պոլսի Գետիկ-փաշայի թատրոնում բեմադրվում է հայկական առաջին կատակերգական օպերան՝ Տիգրան Զուխաճյանի «Արիֆի խորամանկությունը»՝ միաժամանակ նշանավորելով թուրքական երաժշտական թատրոնի սկզբնավորումը։ Թուրքական «İbret» թերթում Նամիք Քեմալը գովեստի խոսքեր է ուղղում «Արիֆին» և ողջունում այն՝ որպես «մեր սեփական լեզվով գրված առաջին օպերա։ Այն շատ լավ է բեմադրված, և նրա երաժշտությունն անթերի է։ Թուրքերեն լեզուն ինքնին շատ երաժշտական է։ Երաժշտությունը հորինված է քնարականության պահպանմամբ»։ Ավելին, սա առաջին պրոֆեսիոնալ օպերան էր ամբողջ Մերձավոր Արևելքում։

«Արիֆի խորամանկությունը» օպերայի թատերաւետորը, որի հիմքում ընկած է ռուս գրականության մեջ գեղարվեստական ռեալիզմի հիմնադիր Ն.Վ.Գոգոլի «Ուկոլոր» կատակերգությունը (սխալմունքի վրա կառուցված սյուժե. պակաս կարևորություն ունեցող մարդուն ընդունում են որպես խոշոր չինովնիկ), հեղինակել է հայ օպերային երգիչ, «Եւրոպ. երաժշտանոցի մեջ ուսած» Թրքահայ առաջին երգիչ, տեմոր Զովհաննես Վ. Աճեմյանը։ Այդ է վկայում ԶԶ գրականության և արվեստի թանգարանում պահվող Զուխաճյանի դիվանում գտնվող օպերայի կապիտոններից մեկի առաջին էջում (կլավիրը տիտղոսաթերթ չունի) սև թանաքով կատարված ձեռագիր գրառումը. «Այս օպերան գրուած է Կօլօլի՝ Ռեկիգետի վրայ և վերածած է թրքական կեանքի Յովհաննես Աճեմյան և անունը տրած է «Արիֆ»»։


«Արիֆի» ներկայացումը հայ երաժշտական իրականության մեջ առաջին դեպքն էր, երբ բեմ էր բարձրանում հայ կոմպոզիտորի օպերան, որը կատարում էին հայ արտիստները։ Ըստ էության, սա ոչ միայն հայկական կոմիկական օպերայի ծննդյան օրն էր, այլև նշանավորեց հայ երաժշտական թատրոնի սկզբնավորումը։ Ի տարբերություն Զուխաճյանի նախորդ՝ «Արշակ Բ» օպերայի, որը հեղինակի կենդանության օրոք բեմական կյանքի ուղեգիր չստացավ, «Արիֆի» բեմադրությունն ունեցավ շոնդալից հաջողություն՝ մեծ հռչակ բերելով հեղինակին և արգասավորելով նրա երկարատև տքմաշան նախապատրաստական աշխատանքը։ Թուրքիայում մասնագիտական կրթություն ստացած երգիչ-երգչուհիների բացակայության պայմաններում (միակ բացառությունը տեմոր Զովհաննես Աճեմյանն էր) Զուխաճյանն ստիպված էր մեծագույն ջանքեր ներդնել. «...երաժշտության գլխավին անգիտակ 30–40 հոգինոց խումբը հաշտեցնելու համար բեմական երաժշտության հետ», ինչն առավել մանրամասն ներկայացրել է Զ. Աճեմյանը ֆրանսերեն լույս տեսած իր հոդվածներից մեկում. «Հայ արուեստաւոր-դերասաններով՝ քնարերգական թատրոնը հաստատած ըլլալու պատիւն ամբողջապէս կը պատկանի հայ երաժշտապետ և իտալական դպրոցի աշակերտ Զուհաճեանի։ Այս մարդը՝ տաղանդով ու յօժարութեամբ արի՝ կը յուսար Օրբեռնդը ծաղկեցնել, և այդ յոյսով էր որ օր մը երգեցիկ խումբի մը կազմութեան ձեռնարկեց։ Գործը դիւրին չէր և պէտք էր շատ անձնկրօնքին ու սէր ունենալ արուեստին վրայ։ Ան պարտաւորութեամբ լքել իր դասախօսութիւնները՝ որոնք զինք ու իր ընտանիքը կ'ապրեցնէին։ Հարկադրութեամբ Վարդուկեանի պէս շրջիլ հոս ու հոն, փնտռել գտնել երիտասարդներ և մանկամարդ աղջիկներ, որոնք քիչ թէ շատ երգեցիկ և եթէ կարելի է, գեղեցիկ ըլլային։ Ամիսներով պահեց, սնոյց այդ խումբը, կրթեց շտապով, վարժեցուց խաղի, պարի ու նուագի, կորսնցնել տուաւ պոռալու տոկորութիւնը, վերջապէս աստիճանաբար սորվեցուց երաժշտութեան արտասանութիւնը»։

Օպերայի առաջնախաղի ժամանակ գլխավոր հերոսուհի Մերիեմի դերերգը կատարեց օսմանյան բեմի պրիմադոնա, «Տ.Զուխաճեանի օփերթներու առաջին եւ աւագ երգչուհի, Վարպետին երգախաղերուն հեքիաթային

տեսարաններուն կեդրոնական վարդը ու միաժամանակ տիկակ, երգեցիկ եւ գեղեցիկ արմենուհի» Շազիկ Քոյուլյանը (ծն. Սըվաճեան, Լուսնակ Սարգսի Քոյուլյան, 1854-1905), իսկ Արիֆի երգամասով հանդես եկավ Վենետիկից նոր վերադարձած և «թեմորի գմայլելի ծայն ու բեմական ընդունակություն» ունեցող Զովհաննես Աճեմյանը (1838-1905)։ Ահավասիկ հուշարար, թատերագիր և թարգմանիչ Տիգրան Գալեմճյանի կարծիքը Շազիկի մասին. «Մեր թատրոնին առաջին սփորանո երգչուհին եղաւ Շազիկ Քօյուլեան, որ ապա եղաւ տիկին Աճեմեան ու վերջն ալ տիկին Օրմանեան։ Մտուրի մը պէս համեստ յարկի մը մէջ գտնուած այդ թռչնակը իր անուշ ծայնով ու իր գեղանի արտաքինով եղաւ ականաւոր վարպետի անմահ Տիգրան Զուհաճեանի օփերթներուն դշխուն։ Արեւելեան ճոխ տարագրով ու շողշողուն զարդերով պճնուած այդ երգող պուպրիկը ոչ միայն կը մոգէր հասարակութիւնը, այլեւ իր բեմի ընկերներն ու ընկերուհիները,

յան թատերախումբ։ Երբեկից դպրոց չհաճախած Շազիկը չգիտեր ոչինչ, փոխարենն ուներ ծայն ու գեղեցկություն։ Մաղաքյանը նրան սովորեցնում է գրել-կարդալ և դերասանություն, իսկ Զուխաճյանը մշակում է ծայնը՝ հասցնելով կատարելության։ «Շազիկի ծայնը սփորանո էր, պայծառ, թրթռուն ու սուր։ Այդ ծայնը կ'ողորուէր տաք բիրեղի նման ու ընդունակ էր գուլալ կերպով արտայայտելու արեւմտեան երաժշտութեան թռիչքները ու արեւելեանին ոլորուն խաղերը։ Կարծեք Շազիկ ստեղծուած էր Զուհաճեանի օփերթներուն համար, որոնց երաժշտութիւնը յաջող պատուաստունն էր արեւելեան եւ արեւմտեան աշխարհակոյսերուն երաժշտութեանց։ Շազիկ շնորհագեղ աղջիկ մըն էր։ Ուներ նուրբ ու ներդաշնակ դէմք, երկար ու գանգուր վարսեր, ինչպէս նաեւ համաչափ մարմին, միջակէն վեր հասակով»։

Շազիկի զգլխիչ դերըտուը տեղի ունեցավ «Արիֆի խորամանկությունը» օպերայի պրեմիերայի ժամանակ և



մինչեւ անգամ հեղինակը օփերթներուն։ Յուշարարի ծակիս մէջէն փորձութեան կ'ենթարկուէի։ Կ'ուզէի տեսնել մէկ կողմ դնել ու միայն տեսնել ու լսել զինքը, բան մը, որ կարելի չէր։ Շազիկ ամբողջովին հմայեց էր»։

Շարասանի դիպուկ բնութագրմամբ՝ «Շազիկ իր սուր, վճիտ ու ոլորուն ծայնին հետ, որ գերազանցորեն տրամադիր էր արեւելյան երաժշտության ծեծծեքուններուն, ուներ երաժշտական բավական հմտություն, իսկ մարմնական մեկե ալելի շնորհներուն, հիանալիորեն սիրուն, ճաշակավոր շարժումներուն հետ, բեմական արվեստի խորունկ ճանաչողություն մը։ Ասոնք ամենքը մեզի կը հարկադրեն զինքը դասելու մեր լավագույն երգչուհիներու կարգը, և եթէ կա եզակի միանգամայն շնորհավորելի պարագա մը Շազիկի վրա, այն է, որ ինք մյուսներուն պէս չէ շեղած իր բեմական սեռեն ու մնացած է միշտ երգչուհի»։

Բարեկեցիկ ընտանիքի զավակ Շազիկը, ընտանեկան ծախսերով լիարժեք, ի մասնավոր՝ Բերայի մեծ հրդեհի հետևանքով, հոր մահից հետո մոր հետ հայտնվում է օրվա հացի կարոտ վիճակում՝ գիշեր ու գոր աւտեղնագործելով ապահովելով ընտանիքի գոյությունը։ «Ամառուան տաք օր մը, Շազիկ իր խցիկին լուսամուտը բացած, կարկառու առջին, կարծես պահ մը մոռցած իր գտնուած վիճակին խեղճութիւնն ու ցուազմութիւնը, իր հոգւոյն բոլոր թափովը կ'երգէր։ Պատահաբար նոյն միջոցին փողոցէն կ'անցնէր Մաղաքեան. վարպետը այդ վայրի դեղձանիկին հոգեցունց երգութեան վերացած, գտնուած տեղը արձանացեալ մնացած էր. արդեօք կարելի չէ՞ր այս աղջիկը բեմ առաջնորդել, խորհեցաւ. և քաջալերուած անոր ապրած միջավայրին հիքութեան, դուռը զարկաւ ու ներս մտաւ։ Շազիկին մայրը, միջոց մը ընդդիմանալ վերջ, կ'ընդունի Մաղաքեանի առաջարկը, իր աղջկան բարոյական պատասխանատուութիւնը թողնելով անոր վրայ»։

Պետրոս Մաղաքյանը նրան առաջնորդում է Վարդով-

դյութեց հանդիսականներին. «Իր ծայնական ու մարմնական առաւելութիւնները կը շողշողան բեմին վրայ, տասնապատկուած ճաճանչներով։ Շազիկ մէկ անգամէն կը դառնայ թատերասէր հասարակութեան սիրելի աղջիկը։ Կը պճնուի պատիւներով ու առատ պարգեւներով»։ Ամախաղեպ հաջողությամբ է Շազիկը կատարել նաև Տ.Զուխաճյանի մյուս կոմիկական օպերաների գլխավոր հերոսուհիներ Գյուլի («Քյոսե Քեհյա») և Ֆաթիմեի («Լեբ-լեբիջի Դոր-հոր աղա») դերերգերը. «Շազիկ հեքիաթի աղջկան մը նման կը հրաշագործէր իր այդ դերերով, իր ծայնով, իր հաճելի ձեւերով, իր խաղով ու խօսակցութեամբ»։

«Արիֆի» պրեմիերան ճակատագրական էր Շազիկի ոչ միայն ստեղծագործական, այլև անձնական կյանքում. ներկայացումից 2 ամիս անց նա ամուսնանում է Արիֆի դերակատար տեմոր Զովհաննես Աճեմյանի հետ։ Ցավոք, նրանց կենաց զուգեգը կարճատև էր...

«Արիֆի խորամանկության» բեմադրությունը շրջադարձային էր նաև Զուխաճյանի կյանքում. անսպասելիորեն խզվում են նրա և Հակոբ Վարդուկյանի հարաբերությունները։ Զ.Պարոնյանը շտապում է խամբեցնել օպերայի հաջողության լույսը. «Անցյալ հինգշաբթի գիշեր Օրթագյուղի թատրոնին մեջ ներկայացվեցավ Արիֆին հիյլեսի անուն կատակերգությունը, և հանդիսականք բավական լացին»։ Պարոնյանը նկատում է. «Ապողոն շատ խստությամբ վարված է պարոն Զուխաճյանին հետ, ամենաչնչին օժիտ մը անգամ չէ տվել իրեն։ Կ'երկի թե Ապողոնի նեղ վիճակին մեջ պարոն Զուխաճյան դիմեր է իրեն։ Եղանակներն բնավ օրերա-քունիքի եղանակներ չեն. լացնելու հարմարություն ունին քիչ մը... եթե մարդս մեռել ունենա։ Պարոն Զուխաճյան պարտավոր էր գոնե արձակ խոսքերն իր եղանակին հարմարեցնել, երբ տեսավ, որ իր եղանակն անհնար էր անոնց հարմարիլ, որով դերասանք խոսած ատեննին չէին խնդացներ ու երգած ատեննին չէին լացուներ, և հանդիսականք ալ չէին շվարեր մնար խնդալու և լալու մեջ։ Մեկ խոսքով պարոն Զուխաճյան քնար մը ունի, որ անկարող է խնդացունել»։ Զուխաճյանին ուղղված քննադատական գնահատականների կողքին Պարոնյանը հաճոյախոսում է գլխավոր դերակատարներին. «Օրիորդ Լուսնակին և պարոն Աճեմյանին գալով՝ հրապարակավ կը շնորհավորենք զիրենք, որ իրենց քաղցր ու թովիչ ծայներովն հաջողեցան պարտկել պարոն Զուխաճյանին քնարին տկարությունն, որ առանց Լուսնակի և Աճեմյանի ի մահ մատներ Արիֆը և յուր հիյլեները»։ Զուխաճյանի կատակերգական օպերաների հանդեպ Պարոնյանի թշնամական վերաբերմունքը (հետագայում հարձակումների թիրախ են դառնում նաև «Քյոսե Քեհյան» և «Լեբլեբիջի Դոր-հոր աղա») համագեցնում է նրան, որ «Թատրոն» լրագրում գրում է. «Մեզի հասած նամակներն կը խնդրեն մեզմե, որ աղաչենք Օրթագյուղի պատվարժան թաղական խորհրդայն, այլև թող չտալ, որ հիշյալ անբարոյական և ընտանյաց համեստությունն վիրավորող թատերգությունն նորեն մուտ գտնե Օրթագյուղի բարեսիրաց թատրոնին մեջ՝ առարկելով, թե՛ արդեն անգամ մը գացողներն երկրորդ անգամ չեն գացած և թե՛ պատվավոր ընտանիքի մը չվայլեր հիշյալ խաղին ներկա գտնվիլն և այլն»։ Եվ պահանջում է արգելել ներկայացումները. «Հիշյալ տողերը ցավելով կը հրատարակենք, որովհետև լրագրաց ոմանց գրածին նայելով՝ հիշյալ խաղն ու անոր եղանակներն հայու փառք ըլլալու վիճակին հասած էին։ Կը ցավինք, որովհետև հիշյալ խաղն հայու փառք ըլլալէ շատ և շատ հեռու է, և անպատվություն ըլլալու շատ մոտ է»։

(շարունակելի)

ԱՆՆԱ ԱՍՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ-ում Կեղևի ունեցավ Սևանա լճի մասին գրքերի շնորհանդես՝ նվիրված ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռաֆայել Հովհաննիսյանի 80-ամյակին

➤ Երևան, 10.10.2022

«Այս տարիների ընթացքում մենք ավելի ու ավելի ենք գնահատում Ռաֆայել Հովհաննիսյանի դերը: 1977 թ. նա ստեղծեց Սևանի հիդրոէկոլոգիայի ուսումնասիրության բազմակարգային համակարգ: Մինչ այդ Սևանա լճի համար այդպիսի համակարգ չկար: Դրանից հետո նա սկսեց Սևանի էվտրոֆիկացիայի ուսումնասիրությունը: Այն, որ 2001 թ. ընդունվեց «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքը, զգալի չափով նրա ներդրումն է», - ասաց ՀՀ ԳԱԱ Բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը:

«Ռաֆայել Հովհաննիսյանի կատարած մեծ գործի պտուղները քաղում ենք մինչ օրս: Մենք այժմ էլ սերտորեն համագործակցում ենք Ռուսաստանի Դաշնու-



ցել է, և կարող ենք գիրքը տրամադրել մարդկանց, ովքեր մտահոգված են Սևանա լճի հիմնախնդրով:

Հարավային գիտական կենտրոնի հետ մեր կապերը շատ սերտ են, և նոր գործիքները, որոնք առաջարկում են լճի ուսումնասիրությունների համար, թույլ կտան մեկ քայլ առաջ գնալ Սևանա լճի մոդելի հետ կապված: Իմ հայրը շահագրգռված էր այդ գաղափարով և ուզում էր, որ Սևանա լճի մոդելը պարտադիր ստեղծված լինի», - ասաց Լուսինե Համբարյանը:

Ռաֆայել Հովհաննիսյանի կյանքի և գիտական գործունեության մասին իրենց հուշերով հանդես եկան ակադեմիկոսներ Սերգեյ Մովսիսյանը և Վիլեն Հակոբյանը, ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի տնօրեն Էվելինա Դուկասյանը, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Հարավային գիտական կենտրոնի գլխավոր մասնագետ, ակադեմիկոս Արարատ Գոմցյանը, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը:

1973-2006 թթ. Ռաֆայել Հովհաննիսյանը ղեկավարել է ՀՀ Սևանի ջրակենսաբանական կայանի աշխատանքները՝ նվիրվելով Սևանի խնդրի լուծման գործին: Նրա նախաձեռնությամբ կայանում կազմակերպվել են հիդրոֆիզիկայի, հիդրոքիմիայի, էկոլոգիական ֆիզիոլոգիայի, փորձարարական էկոլոգիայի լաբորատորիաներ, զարգացել են գիտական ֆունկցիոնալ հիդրոէկոլոգիայի, պրոդուկցիոն հիդրոկենսաբանության նոր ուղղություններ, կիրառվել են նորագույն մեթոդներ և մոտեցումներ: Ռաֆայել Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ Սևանի ջրակենսաբանական կայանը 1990 թ. վերակազմավորվել է որպես ՀՀ ԳԱԱ հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտ:

Ռաֆայել Հովհաննիսյանը նոր փորձարարական ուղղության խոշոր լիմնոհամակարգերի հիդրոէկոլոգիական ցուցանիշների փոփոխության հիման վրա էկոսյստեմականիստագուշակման հեղինակն ու ղեկավարն էր:

Նա մշակել և ՀՀ կառավարության հաստատման է ներկայացրել նաև Հայաստանում «էկոլոգիական գիտության զարգացման հիմնական ուղիները» ծրագիրը:

Գիտական մեծ ավանդ է Ռաֆայել Հովհաննիսյանի դոկտորական ատենախոսությունը «Սևանա լճի ամբոթույթները աղտոտման և նրա բացասական հետևանքները կանխելու ուղիները» թեմայով, որը նա պաշտպանել է 1988 թ. ԳԱԱ-ի պետական համալսարանում: Այն միակ ամփոփ աշխատությունն է, որը ոչ միայն ընդգրկում է Սևանա լճի և նրա ջրահավաք ավազանին վերաբերող բազմամյա հետազոտությունների արդյունքները, այլև խոր գիտական վերլուծությամբ ցույց է տալիս Սևանի հիմնահարցի լուծման հնարավոր լավագույն տարբերակները՝ օգտագործելով ժամանակակից մաթեմատիկական մեթոդները, առաջադրելով կենսա-ծին տարրերի ներհոսքը կարգավորելու ճանապարհով լճի էկոլոգիական վիճակի վերականգնման ինքնատիպ մոդել:

Հիդրոէկոլոգիական ցուցանիշների հիման վրա Հովհաննիսյանի ղեկավարությամբ կատարվել է ջրի որակի ռեսուրսային վերլուծություն, որը կարևոր մշակակություն ունի խոշոր հիդրոէկոհամակարգերի էկոլոգիական վիճակի գնահատման և կանխագուշակման համար: Ստացված գիտական հետազոտության արդյունքներն օգտագործվել են Սևանա լճի ջրահավաք ավազանի բնապահպանական միջոցառումների մշակման ժամանակ, որոնք իրենց արտացոլումն են գտել ԱՊՀ

և ՀՀ կառավարական և վարչական մարմինների հատուկ որոշումներում:

Ռաֆայել Հովհաննիսյանի ղեկավարությամբ հետազոտվել և գնահատվել է նաև համրապետության մյուս խոշոր հիդրոէկոհամակարգերի՝ Սև քարի, Ալմալճի, Ապարանի, Կեչուտի, Մանթաշի ջրամբարների և Հայաստանի խոշոր գետերի էկոլոգիական վիճակը: Ստացված արդյունքների հիման վրա մշակվել և ՀՀ կառավարությանն են ներկայացվել Հայաստանի հիդրոհամակարգերի բնական պաշարների պահպանման, վերականգնման և արդյունավետ օգտագործման բազմաթիվ էկոլոգիական մշակումներ և ծրագրեր:

Հովհաննիսյանը հեղինակ է 125 գիտական աշխատությունների, ներառյալ 2 մենագրությունները, որոնց գիտական ուղղվածությունը էկոլոգիական պրոցեսների հետազոտման ֆունկցիոնալ մոտեցումն է:

Ստահագրվելով Սևանա լճի ճակատագրով՝ Ռաֆայել Հովհաննիսյանի նախաձեռնությամբ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի աշխատակիցները ձեռնամուխ են եղել «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի նախագծի ստեղծմանը, որի առաջնությունն ինքնիշխան լճի ջրի դրական հաշվեկշռի ապահովումն էր:

Ռուսաստանի Դաշնության իր գործընկերների աջակցությամբ Ռաֆայել Հովհաննիսյանը հիմնավորել է լճի մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը և ՀՀ ԳԱԱ Սևանի փորձագիտական հանձնաժողովի նախագահի պաշտոնում պայքարում էր լճի ջրային և ձկնային ռեսուրսների պահպանման և արդյունավետ օգտագործման համար:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը բարձր գնահատեց Ռաֆայել Հովհաննիսյանի գիտական գործունեությունը և ավանդը Սևանա լճի էկոհամակարգի պահպանման գործում: Ներկայացնելով «Սևանա կղզի...» հուշապատում գիրքը՝ նա ասաց. «Այստեղ հավաքված են մարդիկ, ովքեր թե՛ պրոֆեսիոնալ, թե՛ իրենց կյանքի կոչումով Սևանի սիրահարներ են: Սևանի գավակն ու որդի է եղել Ավետիք Իսահակյանը, որը չի դիտել Սևանը որպես բնության երևույթ, աշխարհագրական երևույթ, այլ դիտել է որպես կենդանի էակ: Եվ այս գիրքը երկու ասելիք ունի: Առաջին ասելիքն այն է, որ ես երեք տարեկանից մեծացել եմ Սևանի ափին՝ կղզում, որտեղ Գրողների միության հանգստյան տունն էր, Վարպետի կողքին: Ամեն ինչ տեսել եմ, զգացել, թե՛ ջրի սառնությունը, թե՛ ջրի քաղցր համը, թե՛ այդ գեղեցկությունը: Եվ երկրորդ ասելիքն այն է, թե ինչպես Վարպետը սկզբում միայնակ, հետո կամաց-կամաց նրա բանակը շատացավ, պայքար էր տանում Սևանի չորացման հանցավոր ծրագրի դեմ», - ասաց Ավիկ Իսահակյանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարում է մրցույթ՝ ինստիտուտի ժողովրդական երաժշտության բաժնի վարիչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝
ա) բարձրագույն երաժշտագիտական կրթություն,
բ) գիտական աշխատանքի 10 տարվա փորձ,
գ) արվեստագիտության դոկտորի (կամ թեկնածուի) գիտական աստիճան,

դ) գիտական ստորաբաժանման ղեկավարի պարտականությունների կատարման համար անհրաժեշտ իրավական ակտերի իմացություն (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրություն, գիտության ոլորտի Հայաստանի Հանրապետության օրենսդրություն, իրավական այլ ակտեր):

«ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպության ժողովրդական երաժշտու-

յան բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

ա) գրավոր դիմում կազմակերպության տնօրենի անունով,

բ) երկու լուսանկար՝ 3x4 չափսի,

գ) աշխատանքային գրքույկի պատճենը,

դ) ինքնակենսագրություն,

ե) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

զ) գիտական աստիճանը և գիտական կոչումը (առկայության դեպքում) հավաստող փաստաթղթերը,

է) կադրերի հաշվառման անձնական թերթիկը (լրացված),

ը) գիտական աշխատությունների ցանկը,

թ) բնութագիր վերջին աշխատավայրից,

ժ) գինվորական գրքույկ կամ գինապարտության մասին փաստաթուղթ,

ժա) գիտական ստորաբաժանումը ղեկավարելու և զարգացնելու վերաբերյալ Ծրագիր:

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից), ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ:

Հասցեն՝ Երևան 0019, Մարշալ Բաղդասյան պողոտա 24/IV, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, հեռախոս՝ 58-37-02:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

Գիտություն

**Գլխավոր խմբագիր՝
Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24/4,
հեռ. (010) 56 81 83-357, 077 31 63 76
Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 15.10.2022 թ.:

"ГИТУИОН" ("Hayka") gazeta HAH RA